Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

հոգեբանական պաշտպանական մեխանիզմների վրա հիմնված երևույթ է: Քիրվայության երևույթը ևս չէր կարող շրջանցել երկու կողմերի/ Ղարաբաղցի հայեր - ադրբեջանցիներ/ էթնիկական ստերեոտիպերը և քիրվայության ամենաջերմ դրսևորումների ժամանակ էլ դրսևորվում էր այն զգոնությունը, ինչը խիստ հեռու էր փոխադարձ հարաբերությունների հարմոնիայից: Թե հայ և թե թուրք քիրվաները խիստ զգայուն էին սեփական հոգեբանական տարածքի պահպանման հարցում: «Հայը գյավուր է» /անհավատ/, ուստի խարանակիր. «հայի հացը հարամ է» ստերեոտիպը թուրք քիրվայի ենթագիտակցականում «խարանի էֆեկտ» էր, ինչն անխուսափելի էր դարձնում խտրական դիրքորոշման կայունությունը: Քիրվայական փոխադարձ շփումներում և ընկալումներում «ինքնահիրականացնող մարգարեության» /Ռ. Մերտոն/ մեխանիզմն արտամղվում էր: «Եթե Ա անձնավորությունն Բ-ի մասին ունի ստերեոտիպի վրա հիմնված որոշակի կարծիք, ապա ամենայն հավանականությամբ Բ-ի հետ հաղորդակցվելիս Ա-ն իրեն կպահի այնպես, որ կմղի Բ-ին այնպիսի վարք հանդես բերել, որը կհամապատասխանի իր հանդեպ Ա-ի ունեցած ստերեոտիպին»[7]

Թուրք և հայ քիրվաները իրար մասի ունեին ստերեոտիպերի վրա հիմնված կարծիքներ, սակայն քիրվայության ժամանակ սքողված էր ստերեոտիպերից բխող վարքային դրսևորումները:

Արմեն Բաղդասարյան

Սոցիալ- տնտեսական վիճակը ԼՂՀ-ում

Ուղիղ 12 տարի է անցել հանրապետությունում հրադադարի հաստատումից հետո: Պատերազմական գործողությունների հետևանքով հիմնավեր կործանվել են գործարանները, արտադրական կոմբինատները, քայքայման եզրին են կանգնել տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը, ունեցել ենք հազարավոր մարդկային սպդառնալի կորուստներ և անմեղ զոհեր:

Այսօր, մի հետադարձ հայացք ձգելով դեպի անցյալը, ընկնում ես անկումային տրամադրությունների գիրկը և միայն բարոյական ինքնահսկողության ընդունակություն պետք է ունենալ, նաև՝ հավատ լավագույն ապագայի նկատմամբ, որպեսզի հաղթահարվեն բոլոր ապրումները: Եվ ժողովուրդը մեր, հաղթահարելով հետպատերազմյան բոլոր դժվարությունները, ձեռնամուխ եղավ նոր կյանքի արարմանը, ինչպես ասում են՝ ջնջեց ամեն ինչ և նորից սկսեց ու հաղթեց, քանզի

ճանաչում է և լավ գիտե իրեն, իսկ «Հաղթում է նա, ով ճանաչում է ոչ միայն իր հակառակորդին, այլև ինքն իրեն»:

1996թ. սկսվեցին սոցիալ-տնտեսական բարեփոխումները, որոնք հաստատեցին շուկայական հարաբերությունների գերակայությունը, քայլ առ քայլ հաղթահարվում էին բոլոր կենսական դժվարությունները, դրանց զուգահեռ հանրապետությունում պետահրավական բարեփոխումներ տեղի ունեցան, Ազգային ժողովի և կառավարության կողմից առաջնահերթության կարգով ընդունվեցին մի շարք օրենքներ ու իրավական ակտեր և դրանց լիակատար իրականացման հետևանքով թափ առան տնտեսության ճյուղերը, ձեռք բերվեցին իշխանությունների գործողությունների ներդաշնակություն:

Վերջին տարիներին պետությունը ձեռնամուխ եղավ երկրի տնտեսության ամենաբարենպաստ զարգացման ռազմավարական ուղղությունների մշակմանն ու կոորդինացմանը: Շուկայական ապրանքային հարաբերությունների զարգացմանը զուգընթաց օրենքով և այլ իրավական ակտերով սկսեցին երաշխավորվել և պաշտպանվել սեփականատիրոջ ազատություններն ու ինքնուրույնությունը, որոնք ապահովում են ինչպես արտադրողի, այնպես էլ սոցիալական բարիքները սպառողների իրական հավասարությունը և անկախությունը: Իրականացվում է խիստ հարկային քաղաքականություն, որը պետությանը հնարավորություն է տալիս հաջողությամբ լուծելու իր սոցիալական խնդիրներն, ինչպես նաև վերաբաշխելու ազգային եկամուտների մի մասը հասարակության արտադրողական ուժերի առավել հավասարակշռված զարգացման նպատակով: Տնտեսական կյանքի վրա պետական ներգործությամբ, արդյունավետությամբ և հաջողությամբ է ձևավորվում պետական բյուջեն և նրա ծախսումները, երկրի մասշտաբով տնտեսական զարգացման ծրագրերի կազմումը և դրանց ֆինանսավորումը, արտադրությունը խթանելու համար նյութական բարիք արտադրողներին վարկերի տրամադրման գործընթացում:

Մեծ թափով աջակցություն է ցուցաբերվում ձեռնարկատիրությանը ներգրավելով նոր ընկերություններ, զարգացնելով ենթակառուցվածքները, միաժամանակ լուծելով գործազրկության պրոբլեմը: Այս խնդիրների իրականացման համար մշակվում և օգտագործվում են մեխանիզմներ՝ շինարարներին և արտադրողներին ֆինանսավորելու համար:

Տնտեսական վերելքին զուգընթաց պետությունը պարտավորվածություն է վերցրել իր վրա՝ ապահովելու անհատի սոցիալական

պաշտպանվածությունը, հասարակության բոլոր անդամների կյանքի բնականոն պայմանների ստեղծումը: Նրանք, ովքեր արժանավայել կյանք ապահովելու նպատակով տարբեր օբյեկտիվ պատճառներով չեն կարող լիարժեք աշխատել, ասենք՝ հիվանդները, հաշմանդամները, ծերերը, երեխաները, պետությունն անհրաժեշտ միջոցներ է հատկացնում՝ հատկապես առողջապահության, հանգստի կազմակերպման, բնակարանաշինության և այլնի հստակ աշխատանքի համար: Այդ են վկայում յուրաքանչյուր տարի երեխաների համար կազմակերպվող ամառային ճամբարները, տարբեր հիվանդություններով տառապող անձանց հանգստի և բուժման կազմակերպումը ՅՅ Ջերմուկ և Արզնի քաղաքներում: Դրանով իսկ ապահովվում է քաղաքացիների առողջության պահպանման, հանգստի, բնակարանի, կրթության նվաճումներից օգտվելու իրավունքների պատշաճ իրականացումը, այսինքն սոցիալական այն իրավունքներից, որոնցից առավելագույն ծավալով պետք է օգտվեն պետության քաղաքացիները:

Իհարկե, չենք ժխտում նաև որոշակի նյութական անհավասարությունը, որը ծնում է ճգնաժամ և սուր սոցիալական բախումներ հասարակությունում: Սա բնական երևույթ է, որը տեղի է ունեցել և տեղի է ունենում ցանկացած պատերազմած երկրի ներսում: Այդպիսի պայմաններում միայն պետությունն է ի վիճակի երկրի բնակչության նկատմամբ սոցիալական արդար քաղաքականություն վարելու:

ԼՂՅ սոցիալ-տնտեսական վիճակի մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է միայն ուսումնասիրել 2000-2006թթ. ԼՂՅ ազգային վիճակագրական տեղեկատվական վերլուծությունները, մինչդեռ ընդհանուր պատկերացնելու համար կփորձեմ ներկայացնել որոշ ցուցանիշներ: Այսպես՝ ԼՂՅ համախառն ներքին արդյունքը, որը յուրաքանչյուր պետության բնութագրման ամենաառաջին ցուցանիշն է հանդիսանում, ինչպես նաև որոշակի ժամանակահատվածում տնտեսությունում արտադրված վերջնական սպառման ապրանքների համախառն շուկայական արժեքը, տարեց տարի աճում է՝ 2001թ. 23880.7 մլն. դրամ, 2002թ. 26477.8 մլն. դրամ,. 2003թ. 33883.7 մլն. դրամ, 2004թ.՝ 42830.0 մլն. դրամ, 2005թ.՝ 51379.4 մլն. դրամ:

Համախառն ներքին արդյունքի վրա դրական ազդեցություն են ունեցել ծառայությունների արտադրական ոլորտը, ապրանքների ու ներմուծման զուտ հարկերը, շինարարությունը, առևտուրը և հանրային սնունդը, տրանսպորտը, կապը, ֆինանսները և վարկերը, փոքր և միջին

ձեռնարկատիրությունը, որից հիմնականում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններն են:

Հանրապետությունում վերջին տարիներին օրենքով և կառավարության որոշումներով լուրջ քայլեր են ձեռնարկվում փախստականներին և վերաբնակիչներին սոցիալական աջակցության ուղղությամբ, կառավարության ուշադրության կենտրոնում են հայտնվել հասարակական կազմակերպությունները, յուրաքանչյուր տարի ավելացնելով նրանց դրամաշնորհները՝ դրանով իսկ խթանելով քաղաքացիական հասարակության ձևավորմանը և կայացմանը: Չի կարելի անտեսել նաև աշխատավորների, պետական ծառայողների՝ մասնավորապես ուսուցիչների և առողջապահության համակարգի աշխատակիցների աշխատավարձերի շոշափելի բարձրացումները:

Մի խոսքով, մեր պետությունը, որպես սոցիալական, իրավական և ժողովրդավարական, ինչպես ամրագրված է Սահմանադրության 1-ին հոդվածում, կայացած կհամարվի կայուն տնտեսության և իրավակարգի պայմաններում միայն, որտեղ լիարժեք կերաշխավորվեն մարդու և քաղաքացիական, և՝ տնտեսական, և քաղաքական իրավունքներն ու ազատությունները:

Հարեթ Մարոյան
«Միտք երիտասարդական
վերլուծական կենտրոն» ՀԿ

Գիտելիքահենք տնտեսությունը՝ որպես զարգացման միակ հեռանկար

Համաշխարհային տնտեսությունը XXI-րդ դարում մտնում է զարգացման ուրույն փուլ, որը բնութագրվում է Վերազգային կորպորացիաների ակտիվ գործունեությամբ, պետական առևտրային քաղաքականության լիբերալիզացմամբ, պետական սահմանները դիտարկվում են ավելի շատ տնտեսական, քան քաղաքական կամ աշխարհագրական տեսակետից և այլն: Մարդու կենսական, աշխատանքի պայմանների բարելավումը, գիտատեխնիկական առաջընթացը ստիպում են համաշխարհային տնտեսությանը թևակոխել զարգացման նոր փուլ՝ ինդուստրիալիզմից անցնելով հետ/պոստ/ ինդուստրիալիզմին: Հետինդուստրիալիզմի կարևոր հատկանիշը մարդու կենսական պայմանները բարելավող, նրա ամենաչնչին պահանջմունքները բավարարող ծառայությունների ոլորտի գերակայությունն է նյութական արտադրության նկատմամբ: Բացի դրանից, հետինդուստրիալիզմը ունի ևս մի քանի կարևոր հատկանիշներ.

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ